ԲՅՈՒԼԵՏԵՆ

Նոյեմբեր 2024թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Նոյեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ 21.11.2024թ.-ին և 28.11.2024թ.-ին:
21.11.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 10 հարց հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատին անդամակցելու համար դիմած մեկ կազմակերպությանը և 9 ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, դիմումի համաձայն 2 անդամների անդամակցությունը դադարեցնելու, օրենքի ուժով 3 անդամների անդամացությունը դադարեցնելու, 7 անձանց Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատի արտաքին գնահատման աշխատանքային խմբի վարձատրության չափը հաստատելու, Պալատի անդամ «Գլոբ Աուդիտ» ՍՊԸ նկատմամբ ԿՊՄ կիրառելու, Պալատի գրասենյակային տարածքի ձեռքբերման առաջարկը հաստատելու մասին որոշումները :

28.11.2024թ. նիստի օրակարգում ընդգրկված էր 2 հարց: Քննարկման արդյունքում հաստատվել են Պալատի 2025թ. արտաքին գնահատման կազմակերպությունների ցանկը և ժամանակացույցը հաստատելու, Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահին դիմումի համաձայն պաշտոնից ազատելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 3 նիստ՝ 01.11.2024թ.-ին, 15.11.2024թ.-ին, 19.11.2024թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին հաստատել 9 ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 13.11.2024թ.-ին, 29.11.2024թ.-ին, որոնցում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին փորձագետ հաշվապահի և/կամ աուդիտորի որակավորում շնորհել 7 անձի և հավանություն է տվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

11.11.2024թ.-ին տեղի է ունեցել «Տրանսֆերային գնագոյացման կարգավորումներ. համադրելիություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր Նաիրուհի Ավետիսյանը:
19.11.2024թ.-ին տեղի է ունեցել «Ներքին աուդիտի դերը կառավարման համակարգում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ազատ Գաբրիելյանը:

25.11.2024թ.-ին տեղի է ունեցել «SOX CONTROLS-Ֆինանսական գործառույթների հուսալիության և անվտանգության ապահովում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ֆլորա Գրիգորյանը:

26.11.2024թ.-ին տեղի է ունեցել «Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման առանձնահատկությունների ներկայացում և քննարկում (Օրենսգիրք՝ շարունակություն) և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի հիմնական դրույթների ներկայացում և քննարկում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Հովհաննես Յանիկյանը:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ

2024թ նոյեմբերի 1-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հերթական միջոցառումը՝ նվիրված որակավորման կրթական ծրագրի դժվարին փուլը պատվով հաղթահարած և պահանջվող չափանիշներին համապատասխանության արդյունքում աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում ստացած անձանց որակավորման վկայականների հանձմանը:
Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) նախագահ, Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը և որակավորում ստացած մասնագետները:

ՀԱԵԽ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

2024թ. նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի (ՀԱԵԽ) հերթական նիստը:
Նիստը նախագահում էր ՀԱԵԽ նախագահ, Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը:
Նիստի ընթացքում հաստատվեցին ՀԱԵԽ որակի հսկողության հանձնաժողովի անհատական կազմի և կանոնադրության, մասնագիտական էթիկայի հանձնաժողովի կանոնադրության և այլ հանձնաժողովների անհատական կազմի փոփոխությունների վերաբերյալ որոշումները:
Քննարկվեց նաև ՀՄԴ ցանցային անդամության համար փաստաթղթերի փաթեթի պատրաստման և դիմումի ներկայացման վերաբերյալ հարցը:
ՀԱԵԽ-ի ընդհանուր ժողովին մասնակցում էին նաև Պալատի խորհրդի անդամ Հովհաննես Պետրոսյանը և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը: